

## Մատթեոս 6:5-7 (Matthew 6:5-7)

### «Աղօթք»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի

Այս առաւօտ մեր վերջին պահը աղօթքի պիտի յատկացնենք. մեր խնդանքները Աստուծոյ պիտի բերենք: Արդէն յիշեցինք փառաբանութիւն, խոստովանութիւն եւ գոհաբանութիւն, եւ հիմա կ'անցնինք աղաջանքի: Յայտագրին մէջ պիտի գտնէք աղօթքի նիւթեր:

Երբ աղօթքի առիթ կուտանք, շատեր կը փաշուին բանձրաձայն աղօթելու: Ես ալ երբեմն նոյնպէս կը զբամ: Ինչո՞ւ... Երկու Պատնառներ յիշենք:

#1. Փոխանակ մեր սիրտը Աստուծոյ բանալու, կը մտածենք թէ ուրիշներ ինչ<sup>ո</sup> կը խորհին մեր աղօթքին մասին. արդիօք լաւ կարտասանե՞նք, չէ որ ուրիշներ մէզմէ լաւ կ'աղօթեն, աւելի հոգեւոր են, եւայլն:

Ասիկա շիտակ չէ. պէտք է որ մենք միայն Աստուծոյ վախնանք եւ ո՛չ թէ մարդոցմէ: Թող Աստուած առաջին տեղը գրաւէ մեր կեանքերուն մէջ եւ ո՛չ թէ ուրիշը:

Աստուած չակնկալեր որ շինենք գեղեցիկ ոտանաւորներ, փառաւոր պատգամներ: Յիսուս կ'ըսէ, Մատթեոս 6:5-7 մէջ, *«Երբ աղօթք կ'ընես կեղծաւորներուն նման չըլլաս, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ ու հրապարակներու անկիւնները կայնելով աղօթք ընել, որպէսզի մարդոց երեւնան... Իսկ երբ դուն կ'աղօթես, հեթանոսներուն պէս շատախօս մի՛ ըլլար, անոնք կը կարծրն թէ իրենց շատ խօսելուն համար պիտի լսուին:»*

Յիսուս, Մատթեոս 18ին մէջ մեզի կ'ըսէ թէ Աստուծոյ մօտէնալու էնք մանուկներու նման, պարզ հաւատով. մանուկները անկեղծ են եւ ինչ որ իրենց սրտին մէջ է զայն կարտասանեն. ուրեմն մէնք ալ մօտենանք Աստուծոյ, անկեղծ սրտով, եւ ջանք ջ'ընենք ուրիշներ տպաւորելու մէծ բառերով:

#2. Երկրորդ արգելիք սա է՝ ջենի ուզեր ուրիշներու առջեւ աղօթել, քանի որ անարժան կը զգանք մենք զմենք, Կը խորհիմք թէ Աստուած շատ բարձր է մեզի, Ան մեր ստեղծիչն է եւ անմերձեանալի է եւ թէ ինչպէ՞ս կրնանք Աստուծոյ մօտեանալ ուրիշներու առջեւ:

Աստուած Իր խօսքին մէջ շատ անգամ մեզ կը քաջալերէ որ զինքն փնտռենք, Իրըն մօտեանակ (Երբմիա 29:11-14; Յովհաննու 16:24) երբ անկարող կը զգանք աղօթելու, յիշենք որ Աստուած ինք բարեխօս կ'ըլլայ մեզի համար: Հոովմայեցիս 8:26ը կ'ըսէ, Աստուած կ'օգնէ մեզի որ աղօթենք, այս է խօսքը, «Հոգին ալ օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն. քանի ինչո՞ւ եւ ինչպէս աղօթելու ենք՝ ջենք գիտներ. բայց ինքը Սուրբ Հոգին՝ բարեխօս կ'ըլլայ մեզի համար ան բարբառ հառաջանքներով:» Առաւել, Յիսուս ինք մեր բարեխօսն է. 1 Յովհաննու 2:1 կ'ըսէ թէ Հօրը քով համար բարեխօս ունինք Յիսուս Քրիստոսը. ան մեզի համար բարեխօսութիւն կ'ընէ Աստուծոյ: Այսպէս, Աստուած առիթ կուտայ մեզի Իրեն մօտեանալու եւ մեր սրտերը պարպելու Իր առջեւ. ուրեմն կրնանք աղօթել անվախ առանձին կամ խմբովին:

Այս առաւօտ կը քաջալերենք ձեզ որ ըլլաք քաջ ու անվախ. Աստուած կուզէ որ Իրեն հետ խօսիմք առանց քաշուելու: Աղօթէ՛, կրնաս միայն քառ մը, Նախադասութիւն մը ըսել, թող սրտէդ քայ, պարզ, անկեղծ: Թող Սուրբ Հոգին քեզ առաջնորդէ եւ այսպէս քաց սիրտդ Աստուծոյ առջեւ բոլորս ալ աղօթենք, թէ Աստուած կուրախանայ եւ թէ մենք որպէս համայնք: